ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--------» ---------- 2016թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ՄԱՄՆԱԿԻ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման 3-րդ կետով, «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական առողջացման նպատակով՝

Երևանի ավագանին որոշում է.

1. «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը մասնակի ազատել 2015 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից հաշվարկված և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի վճարումից՝ 26875.6 հազ.դրամի (քսանվեց միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար վեց հարյուր դրամ) չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը 2015 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի վճարումից մասնակի ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Երևանի ավագանու 2016 թվականի մայիսի 25-ի հ.532-Ա և Երևանի քաղաքապետի 2016 թվականի հունիսի 3-ի հ.2033-Ա որոշումների համաձայն՝ «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2015 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած 87189.0 հազ. դրամի զուտ շահույթից 2016 թվականին Երևանի բյուջե պետք է վճարեր 34875.6 հազ. դրամի շահութաբաժին, սակայն վճարել է ընդամենը 8000.0 հազ. դրամ և պարտքը 01.10.2016թ. դրությամբ կազմում է 26875.6 հազ. դրամ:

Ընկերության 2015 թվականի ցուցանիշներով շահույթը կազմել է 115.7 մլն. դրամ՝ նախահաշվով նախատեսված 85.4 մլն. դրամի դիմաց: Շահույթի գերակատարումը պայմանավորված է նրանով, որ համաձայն «Երևանտրանս» և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ների միջև կնքված պայմանագրի՝ երթուղիների սպասարկման ծառայության վճարները ժամկետում չկատարելու դեպքում հաշվարկվել են տույժեր (2015թ. սպասարկման վճարները կազմել են 40.2 մլն. դրամ, իսկ հաշվարկված տույժերը՝ 34.4 մլն. դրամ) առանց ժամկետային սահմանափակման, որն էլ հաշվեգրման սկզբունքին համաձայն ձևակերպվել է որպես եկամուտ և առաջացրել լրացուցիչ շահույթ:

Շահույթի գերակատարման պայմաններում Ընկերությունն ունի ազատ դրամական միջոցների (01.01.2016թ. դրությամբ դրամական մնացորդը կազմել է 2.1 մլն. դրամ) խիստ անբավարարություն, որը պայմանավորված է 01.01.2016թ. դրությամբ 408.1 մլն. դրամ դեբիտորական պարտքերի առկայությամբ, որից միայն 30.7 մլն. դրամն է ընթացիկ պարտքեր, իսկ մնացած 377.4 մլն. դրամի պարտքերն առաջացել են 2012-2014թթ: Դեբիտորական պարտքերի մեծ մասի գծով ընթանում են դատական գործընթացներ կամ ընդգրկված են դատարանի վճիռներով լուծարման գործընթացում (սնանկ ճանաչելու հիմքով) գտնվող կազմակերպությունների պարտատերերի ցուցակներում:

Ժամկետանց պարտքերում զգալի մաս է կազմում «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի պարտքը. այսպես՝ Ընկերությանը երթուղիների սպասարկման գծով՝ 01.01.2016թ. դրությամբ առկա 196.7 մլն. դրամ պարտքը պայմանավորված է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի ֆինանսական միջոցների սղությամբ:

Ընկերության կրեդիտորական պարտքերը 01.01.2016թ. դրությամբ կազմել են 66.7 մլն. դրամ:

Ներկայումս դրամական միջոցների անբավարարության հետևանքով Ընկերությունը հնարավորություն չունի վճարել շահութաբաժնի գումարը, ուստի հիմք ընդունելով Ընկերության ֆինանսատնտեսական ցուցանիշները և ֆինանսական առողջացման նպատակով, առաջնորդվելով Երևանի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման 3-րդ կետով, առաջարկվում է «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը մասնակի՝ 26875.6 հազ.դրամի չափով ազատել 2015 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից հաշվարկված և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի վճարումից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը 2015 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի վճարումից մասնակի ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

«Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը 2015 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի վճարումից մասնակի ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի փոփոխությունների անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը 2015 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի վճարումից մասնակի ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության կամ բացակայության մասին

«Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը 2015 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի վճարումից մասնակի ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ